Digitally signed by GHAZARYAN HOVHANNES 1404750070
Date: 2023.08.10 13:37:27 AMST

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/0485/02/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

01 օգոստոսի 2023 թվական քաղաք Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ՝ դատավոր Հովհաննես Ղազարյանի

հատուկ հայցային վարույթի կարգով, գրավոր ընթացակարգով, առանց դատական նիստ հրավիրելու քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «ԱՄԵՆԱՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության *(ՀՎՀՀ՝ 04435513, պետական գրանցման համարը՝ 99.110.1140694)* ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի՝ թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 30.03.2023 թվականի թիվ 8 արձանագրությամբ «ԱՄԵՆԱՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու և այն վերացնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

17.04.2023թ.-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ նաև Դատարան) մուտքագրվել է «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Հայցվոր կամ Ընկերություն) անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի (այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Դեպարտամենտ)՝ թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 30.03.2023 թվականի թիվ 8 արձանագրությամբ «ԱՄԵՆԱՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու և այն վերացնելու պահանջներով:

Դատարանի 26.04.2023թ.-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

17.05.2023թ.-ին հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

Դատավորի աշխատակազմին գործը հանձնվել է 22.05.2023թ.-ին:

Դատարանի 25.05.2023թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և այն Դատարան ներկայացված է համարվել 17.04.2023թ.-ին: Որոշվել է գործը քննել գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու:

25.05.2023թ.-ին Դատարանը կայացրել է նաև որոշում՝ ապացույց պահանջելու մասին. Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական

դեպարտամենտից պահանջվել է Դատարանին տրամադրել թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման գործընթացին առնչվող՝ իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, այդ թվում՝ թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի նիստի 30.03.2023 թվականի թիվ 8 արձանագրությամբ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշման հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը հիմնավորող ապացույցները:

27.06.2023-17.07.2023թթ. ժամանակահատվածում նախագահող դատավորը գտնվել է ժամանակավոր անաշխատունակության մեջ:

07.07.2023թ.-ին Դատարանում մուտքագրվել է Դեպարտամենտի անունից ներկայացված պատասխանը՝ հայցադիմումի վերաբերյալ:

18.07.2023թ.-ին Դատարանը կայացրել է որոշում՝ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը փոփոխելու մասին:

<u>Հայցվորի իրավական դիրքորոշումը.</u>

Հայցվորի ներկայացուցիչ Կարեն Ղոնյանը *(Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1725)* հայցապահանջը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից, ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ քաղաքի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման համար, հայտարարվել է մրցույթ: Գնման ծածկագիրն է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01»:

«ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությունը մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել:

Հանձնաժողովի 21.03.2023 թվականի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հայտից բացակայում է մասնակցի կողմից հաստատված ծավալաթերթ-նախահաշիվը: Նույն արձանագրությամբ թերությունները շտկելու համար ժամկետ է սահմանվել 2023 թվականի մարտի 22-ը ներառյալ: Սահմանված ժամկետում հանձնաժողովի կողմից մատնանշած միակ թերությունը շտկվել է:

24.03.2023 թվականի թիվ 6 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությունը շտկել է անհամապատասխանությունը: Այսինքն, ըստ Հայցվորի ներկայացուցչի, ներկայացված հայտում թերություններ առկա չեն:

30.03.2023 թվականի թիվ 8 արձանագրության 1.2.3 կետի համաձայն՝ հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ դիմում-հայտարարության /Հավելված 1/՝ լիազորված անձի կողմից էլեկտրոնային թվային ստորագրության հաստատման ամսաթիվը չի համապատասխանում լիազորագրի գործողության ժամկետին (Փաստաթղթի ստորագրման պահին՝ 22.03.2023թ.-ին, լիազորագրի գործողության ժամկետը ավարտված է եղել: Լիազորագիրը գործել է մինչև 20.03.2023թ.-ը):

Հայցվորի ներկայացուցիչը գտնում է, որ հանձնաժողովի գործողությունները ոչ իրավաչափ են՝ հետևյալ հիմնավորմամբ.

21.03.2023 թվականի թիվ 4 արձանագրությամբ Ընկերության կողմից ներկայացված հայտի թերությունները նշելիս՝ հանձնաժողովը չի նշվել լիազորագրի ժամկետը լրացած լինելու հանգամանքը, իսկ 24.03.2023 թվականի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովն արձանագրել է, որ թերությունները շտկվել են՝ չնշելով լիազորագրի ժամկետի լրացման մասին: Լիազորագրի ժամկետը սահմանված է եղել մինչև 20.03.2023 թվականը, այսինքն՝ 21.03.2023 թվականին թիվ 4 արձանագրությունը կազմելու ժամանակ, լիազորագրի ժամկետն արդեն իսկ լրացած է եղել: Հետևաբար՝ եթե հանձնաժողովը թիվ 4 արձանագրության մեջ նշեր նաև այդ խախտումը, ապա այն նույնպես սահմանված ժամկետում կշտկվեր:

24.03.2023 թվականի թիվ 6 արձանագրությամբ նշվել է, որ Ընկերությունը հայտ ներկայացնելու թերությունները շտկել է: Որպես հայտը ներկայացնելու թերություն՝ լիազորագրի ժամկետի լրանալու հանգամանքը թիվ 4 արձանագրությամբ չարձանագրելով, հետագայում թիվ 6 արձանագրության մեջ նշելով, որ հայտ ներկայացնելու թերությունները շտկվել են, այսինքն՝ թերություն առկա չէ, հանձնաժողովը չեր կարող Ընկերության հայտը մերժել:

Վկայակոչելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41 և 42 կետերը՝ Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, թե Ընկերության ներկայացրած հայտը պետք է գնահատվեր բավարար, քանի որ սահմանված ժամկետում Ընկերությունը շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

Վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը՝ Հայցվորի ներկայացուցիչը պնդել է, թե «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 8 արձանագրությամբ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը ենթակա է ոչ իրավաչափ ճանաչման և վերացման:

Վերոգրյալի հիման վրա Հայցվորի ներկայացուցիչը Դատարանին խնդրել է *Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների (ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ քաղաքի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների) ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 30.03.2023 թվականի թիվ 8 արձանագրությամբ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը ճանաչել ոչ իրավաչափ և վերացնել:*

Որպես պահանջի հիմնավորում՝ Դատարանին ներկայացվել են հետևյալ ապացույցները.

- Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճենը.
- «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2023թ.-ի նիստի N 3 արձանագրության պատճենը.
- «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2023թ.-ի նիստի N 4 արձանագրության պատճենը.

- «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2023թ.-ի նիստի N 6 արձանագրության պատճենը.
- «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2023թ.-ի նիստի N 8 արձանագրության պատճենը.
- «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում արված հայտարարությունը՝ պայմանագիր կնքելու որոշման մասին.
- պետական տուրքի վճարման անդորրագիրը:

<u>Պատասխանողի իրավական դիրքորոշումը.</u>

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներկայացուցիչ Լուսինե Քոսյանը հայցի դեմ առարկել է հետևյալ փաստարկներով.

1.1. Դատական դեպարտամենտի կողմից կազմակերպվել է Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների (ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ քաղաքի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների) ձեռքբերման նպատակով «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

1.2. Տվյալ ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 2023 թվականի մարտի 10-ին:

1.3. Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությունը 09.03.2023թ.-ին:

1.4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2023թ. մարտի 21-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝

- դիմում-հայտարարությունում (Հավելված 1) իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով հնարավոր չէ տեսնել «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.3) ավելորդ է և գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել,
- (...)
- բացակայում է (կցված չէ) մասնակցի կողմից հաստատված ծավալաթերթ-նախահաշիվը (Հավելված N 2.1):

1.5. Հանձնաժողովը կասեցրել է նիստը և Հայցվորին առաջարկել մեկ աշխատանքային օրում՝ մինչև մարտի 22-ը ներառյալ, շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.6. Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ Ա. Մեսրոպյանի 2023 թ. մարտի 21-ի N ԴԴ-3-Ե-2311 գրությամբ, ի թիվս այլոց, «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Հ. Պետրոսյանը ծանուցվել է այն մասին, որ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ

անհամապատասխանություններ, նշելով՝ կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են առկա Հայցվորի կողմից ներկայացված հայտում:

1.7. Ընկերության տնօրեն Հարություն Պետրոսյանի կողմից 09.03.2023թ.-ին տրված լիազորագրի համաձայն՝ Սամվել Խաչատրյանը լիազորվել է մուտքագրելու «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտը: Լիազորագրի գործողության ժամկետ է սահմանվել 20.03.2023թ.-ը:

1.8. «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվել են 22.03.2023թ.-ին:

1.9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. մարտի 22-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է խմբագրել թիվ 4 արձանագրության 1.3 ենթակետի 2-րդ պարբերությունը և արձանագրության 3-րդ կետը, այն է՝ մասնակիցների ներկայացրած գների աղյուսակը: Նույն արձանագրությամբ որոշվել է կասեցնել նիստը և հաջորդը հրավիրել մարտի 24-ին, համապատասխանաբար ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև մարտի 23-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. մարտի 24-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետներում շտկել է ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովը որոշել է հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման ներկայացված հայտերի ուսումնասիրության համար հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մարտի 29-ին:

1.11. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. մարտի 28-ի արտահերթ նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է խմբագրել գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 2.8 կետի 4-րդ ենթակետը (...), նիստը կասեցնել ու հայտերի բացման և գնահատման հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մարտի 30-ին:

1.12. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. մարտի 30-ի նիստի թիվ 8 արձանագրության 1.2.3 կետի համաձայն՝ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ դիմում-հայտարարության (Հավելված N 1)՝ լիազորված անձի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատման ամսաթիվը չի համապատասխանում լիազորագրի գործողության ժամկետին (փաստաթղթի ստորագրման պահին՝ 22.03.2023թ. լիազորագրի գործողության ժամկետն ավարտված է եղել: Լիազորագիրը գործել է մինչև 20.03.2023թ.):

(...) Հանձնաժողովը որոշել է, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով՝ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

1.13. Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատարի 2023թ. մայիսի 2-ի «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 5 որոշման համաձայն՝ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությունը ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը, նույն հոդվածի 2-րդ մասը, Որոշման 32-րդ կետի 9-րդ ենթակետը, Պատասխանողի ներկայացուցիչը հայտնել է հետևյալը. գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական ակտի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ի թիվս այլնի, այն դեպքում, երբ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ինչ վերաբերում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումար վճարած լինելուն, նման պարտավորություն Հայցվորը կստանձներ միայն պայմանագրի կնքումից հետո:

Այն հանգամանքները, որոնք գնման գործընթացում գնահատվում են որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, նախատեսվել են Որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետով, որի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսինքն, ըստ Պատասխանողի ներկայացուցչի, ի թիվս այլ դեպքերի, եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում, անհամապատասխանությունը շտկելու համար մեկ անգամ հնարավորություն տալուց հետո, չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, կամ շտկում է վկայակոչված անհամապատասխանությունը, սակայն առկա է լինում նոր անհամապատասխանություն, ապա այդ հանգամանքը գնահատվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչը ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների, հիմք է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում նրան ներառելու համար:

Նման մեկնաբանությունը, ըստ Պատասխանողի ներկայացուցչի, բխում է գնումների գործընթացի և գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության տրամաբանությունից: Մասնավորապես, գնումների գործընթացի ողջ

տրամաբանությունից բխում է, որ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելով՝ մասնակիցը տվյալ գնման գործընթացի շրջանակներում արդեն իսկ ստանձնում է որոշակի պարտականություն, այդ թվում՝ հրավերի պահանջներին համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն: Նման դիրքորոշում է արտահայտել նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ/63151/02/22 քաղաքացիական գործով 2023 թ. հունվարի 23-ին կայացված դատական ակտով:

2023 թվականի մայիսի 2-ին, «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում, Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատարի կողմից կայացվել է ««ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 5 որոշումը, որով «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությունը ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2023թ.-ի նիստի N 6 արձանագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արձանագրության վերջին պարբերությամբ նշվել է հետևյալը. «Հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման ներկայացված հայտերի ուսումնասիրության համար հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մայիսի 29-ին՝ ժամը 12:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1): Այսինքն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2023թ. նիստի N 6 արձանագրությամբ հստակ նշվել է, որ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման ներկայացված հայտերի ուսումնասիրության համար հրավիրվել է մեկ այլ նիստ՝ 2023 թ. մարտի 29-ին, ուստի «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտի համապատասխանությանը Գնահատող հանձնաժողովը թիվ 6 արձանագրությամբ չի անդրադարձել: Ինչ վերաբերում է N 6 արձանագրության 1.1 կետին, որով նշվել է, որ «... սահմանված կարգով և ժամկետում շտկել են ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները», ապա դրանով Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 1.1 կետում նշված ընկերությունները հրավերով սահմանված կարգով և ժամկետում կրկին ներկայացրել են հայտը, իսկ նույն արձանագրությամբ, միևնույն ժամանակ, նշվել է, որ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով գնահատող հանձնաժողովը որոշել է հրավիրել հաջորդ նիստը:

Ըստ Դեպարտամենտի ներկայացուցչի՝ ողջ վերոգրյալը թույլ է տալիս եզրահանգել, որ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու, գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցման և վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու գործընթացում Պատասխանողի կողմից պահպանվել են համապատասխան կարգավորումներով սահմանված պահանջները, ուստի, Հայցվորի կողմից դատարանին ներկայացված՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 30.03.2023թ. թիվ 8 արձանագրությամբ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը որ իրավաչափ ճանաչելու և վերացնելու վերաբերյալ պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Որպես առարկությունների հիմնավորում՝ Պատասխանողի ներկայացուցիչը Դատարանին է ներկայացրել «Ապացույց պահանջելու մասին» 25.05.2023թ.-ի որոշմամբ պահանջված փաստաթղթերը:

<u>Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Դատարանը գտնում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը (ստորև շարադրված փաստերի աղբյուր են հանդիսացել ***«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող, համացանցում առկա՝*** *https://procurement.minfin.am/hy/search/* ***հղման ներքո հասանելի տեղեկատվությունը***).

1. Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների (ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ քաղաքի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների) ձեռքբերման նպատակով հայտարարվել է մրցույթ (ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01») ***/անվիճելի փաստ/:***

2. 09.03.2023թ.-ին «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Հարություն Պետրոսի Պետրոսյանը Սամվել Արարատի Խաչատրյանին տվել է լիազորագիր՝ մինչև 20.03.2023թ.-ը գործողության ժամկետով: Սամվել Արարատի Խաչատրյանը լիազորվել է Ընկերության անունից ստորագրել և մուտքագրել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտը armeps էլեկտրոնային գնումների հարթակում ***/հիմք՝ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Հարություն Պետրոսի Պետրոսյանի կողմից Սամվել Արարատի Խաչատրյանին 09.03.2023թ.-ին տրված լիազորագիրը/:***

3. «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն 09.03.2023թ.-ին ներկայացրել է նաև «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությունը: Դիմում-հայտարարությունն «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացրել է Ընկերության լիազորված անձ Սամվել Խաչատրյանը ***/անվիճելի փաստ/:***

4. 21.03.2023թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող ծավալաթերթ-նախահաշիվը (Հավելված թիվ 2.1) ***/անվիճելի փաստ/:***

5. «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությանն ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում, որով առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը և Հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով՝ Հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթղթերը ***/անվիճելի փաստ/:***

6. Օրենքով սահմանված ժամկետում և կարգով՝ 22.03.2022թ.-ին, «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից կրկին ներկայացվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն, որի հետ մեկտեղ ներկայացվել է նաև Հավելված 2.1-ը՝ Ծավալաթերթ-նախահաշիվը: Դիմում-հայտարարությունն «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացրել է Սամվել Խաչատրյանը, ում լիազորությունները 22.03.2022թ.-ի դրությամբ եղել են դադարած ***/անվիճելի փաստ/:***

7. 24.03.2023թ.-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ հրավերով սահմանված կարգով և ժամկետում «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից շտկվել է ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը: Նույն արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը որոշել է. Հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման ներկայացված հայտերի ուսումնասիրության համար հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մարտի 29-ին՝ ժամը 12:00-ին (…) ***/անվիճելի փաստ/:***

8. 28.03.2023թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և հայտերի բացման և գնահատման հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մարտի 30-ին՝ ժամը 12:00-ին (…) ***/անվիճելի փաստ/:***

9. 30.03.2023թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը. «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ Հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես. Դիմում-հայտարարության (Հավելված թիվ 1)՝ լիազորված անձի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատման ամսաթիվը չի համապատասխանում լիազորագրի գործողության ժամկետին (փաստաթղթի ստորագրման պահին՝ 22.03.2023թ.ին, լիազորագրի գործողության ժամկետն ավարտված է եղել: Լիազորագիրը գործել է մինչև 20.03.2023թ.-ը) ***/անվիճելի փաստ/:***

10. 30.03.2023թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը որոշել է «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել ***/անվիճելի փաստ/:***

11. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետի ա. ենթակետի և 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի

ղեկավարի պաշտոնակատար Ն. Գալստյանը որոշել է. «(…) «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությանը (…) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ***/հիմք՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար Ն. Գալստյանի 02.05.2023թ.-ի թիվ 5 որոշումը՝ ««ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին»/:***

<u>Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Վերլուծելով և գնահատելով գործի տվյալներն ու հետազոտված ապացույցները, Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման՝ քննությամբ հաստատված հետևյալ փաստական հանգամանքների և դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի հիման վրա.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝*

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:*

Սույն գործի փաստերի համաձայն՝

- Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների (ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ քաղաքի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների) ձեռքբերման նպատակով հայտարարվել է մրցույթ (ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01»):
- 09.03.2023թ.-ին «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Հարություն Պետրոսի Պետրոսյանը Սամվել Արարատի Խաչատրյանին տվել է լիազորագիր՝ մինչև 20.03.2023թ.-ը գործողության ժամկետով: Սամվել Արարատի Խաչատրյանը լիազորվել է Ընկերության անունից ստորագրել և մուտքագրել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով

գնման ընթացակարգի մասնակցության հայտը armeps էլեկտրոնային գնումների հարթակում:

- «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն 09.03.2023թ.-ին ներկայացրել է նաև «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությունը: Դիմում-հայտարարությունն «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացրել է Ընկերության լիազորված անձ Սամվել Խաչատրյանը:

- 21.03.2023թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող ծավալաթերթ-նախահաշիվը (Հավելված թիվ 2.1):

- «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությանն ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում, որով առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը և Հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով՝ Հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթղթերը:

- Օրենքով սահմանված ժամկետում և կարգով՝ 22.03.2022թ.-ին, «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից կրկին ներկայացվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն, որի հետ մեկտեղ ներկայացվել է նաև Հավելված 2.1-ը՝ Ծավալաթերթ-նախահաշիվը: Դիմում-հայտարարությունն «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացրել է Սամվել Խաչատրյանը, ում լիազորությունները 22.03.2022թ.-ի դրությամբ եղել են դադարած:

- 24.03.2023թ.-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ հրավերով սահմանված կարգով և ժամկետում «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից շտկվել է ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը: Նույն արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը որոշել է. **Հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման ներկայացված հայտերի ուսումնասիրության համար հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մարտի 29-ին՝ ժամը 12:00-ին (…):**

- 28.03.2023թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և հայտերի բացման և գնահատման հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մարտի 30-ին՝ ժամը 12:00-ին (…):

- 30.03.2023թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը. «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ Հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես. Դիմում-հայտարարության (Հավելված թիվ 1)՝ լիազորված անձի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատման ամսաթիվը չի համապատասխանում լիազորագրի գործողության ժամկետին (փաստաթղթի

ստորագրման պահին՝ 22.03.2023թ.ին, լիազորագրի գործողության ժամկետն ավարտված է եղել: Լիազորագիրը գործել է մինչև 20.03.2023թ.-ը):

- 30.03.2023թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը որոշել է «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

Դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ սույն գործի բոլոր փաստերն անվիճելի են. դրանք հաստատվել են գրավոր ապացույցներով և ընդունվել են գործին մասնակցող անձանց գրավոր հայտարարություններով:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ վեճը լուծելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

1/. արդյո՞ք առաջին անգամ Հրավերի պահանջներին անհամապատասխանություն հայտնաբերելու օրվա՝ 21.03.2023թ.-ի, դրությամբ Ընկերության ներկայացուցչի լիազորությունները դադարած լինելու հանգամանքը Դեպարտամենտը պետք է դիտեր որպես Հրավերի պահանջներին ևս մեկ անհամապատասխանություն:

2/. Արդյո՞ք Դեպարտամենտը պարտավոր է եղել Ընկերությանը ծանուցել այն մասին, որ 21.03.2023թ.-ի դրությամբ Սամվել Խաչատրյանին Ընկերության կողմից տրված լիազորագրի ժամկետը եղել է ավարտված:

3/. Արդյո՞ք Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը և/կամ Ընկերության անունից հանդես եկող Սամվել Խաչատրյանն իմացել են կամ պարտավոր էին իմանալ այն մասին, որ 22.03.2023թ.-ի դրությամբ Սամվել Խաչատրյանը գնանշմանը մասնակցելու դիմում-հայտարարությունն ստորագրելու լիազորություն չի ունեցել:

4/. Արդյո՞ք 24.03.2023թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության մեջ տեղ գտած «հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները» ձևակերպումից բխում է, որ կրկին ներկայացված փաստաթղթերը ենթարկվել են բովանդակային ուսումնասիրության, և դրանցում որևէ խնդիր չի հայտնաբերվել:

Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ 09.03.2023թ.-ին «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Հարություն Պետրոսի Պետրոսյանը Սամվել Արարատի Խաչատրյանին տվել է լիազորագիր՝ **մինչև 20.03.2023թ.-ը գործողության ժամկետով:** Սամվել Արարատի Խաչատրյանը լիազորվել է Ընկերության անունից ստորագրել և մուտքագրել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտը armeps էլեկտրոնային գնումների հարթակում:

Դատարանը հաստատված է համարում նաև այն հանգամանքը, որ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունն «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերությունն առաջին անգամ ներկայացրել է 09.03.2023թ.-ին: Դիմում-հայտարարությունն «ԱՄԵՆԱՇԻՆ» ՍՊ ընկերության անունից 09.03.2023թ.-ին էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացրել է Ընկերության լիազորված անձ Սամվել Խաչատրյանը:

Նման պայմաններում ակնհայտ է դառնում, որ 21.03.2023թ.-ին կայացած նիստում և նիստի թիվ 4 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը լիազորագրի մասով

խախտում կամ Հրավերի պահանջներին անհամապատասխանություն չէր կարող արձանագրել, քանի որ այդպիսին առկա չի եղել:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք Գնահատող հանձնաժողովը պարտավոր է եղել Ընկերությանը ծանուցել այն մասին, որ 21.03.2023թ.-ի դրությամբ Սամվել Խաչատրյանին Ընկերության կողմից տրված լիազորագրի ժամկետը եղել է սպառված, Դատարանը գտնում է, որ նման պարտականություն Գնահատող հանձնաժողովը չի ունենցել, քանի որ, ինչպես նշվեց վերևում, առաջին անգամ դիմում-հայտարարությունը ներկայացնելու օրվա՝ 09.03.2023թ.-ի, դրությամբ դիմում-հայտարարությունն ստորագրվել է պատշաճ լիազորություններ ունեցող անձի կողմից: Ու եթե Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Հավելված 2.1-ը՝ ծավալաթերթ-նախահաշիվը, բացակայում է, դա նշանակում է, որ ծավալաթերթ-նախահաշիվը ենթակա է ներկայացման մեկ աշխատանքային օրվա ընթացքում, և ամենևին չի նշանակում, որ կրկին ներկայացվելիք դիմում-հայտարարությունը կարող էր ստորագրվել այն ստորագրելու լիազորություն չունեցող անձի կողմից: Առավել ևս, որ թե՛ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը (լիազորող), թե՛ Ընկերության անունից հանդես եկող Սամվել Խաչատրյանը (լիազորվող) քաջատեղյակ են եղել այն մասին, որ 22.03.2023թ.-ի դրությամբ Սամվել Խաչատրյանը գնանշմանը մասնակցելու դիմում-հայտարարությունն ստորագրելու լիազորություն այլևս չի ունեցել:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք 24.03.2023թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության մեջ տեղ գտած «հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները» ձևակերպումից բխում է, որ կրկին ներկայացված փաստաթղթերը 24.03.2023թ.-ին կայացած նիստում ենթարկվել են բովանդակային ուսումնասիրության, Դատարանն արձանագրում է, որ նման հետևություններ անելու հիմքերը բացակայում եմ: Այդ մասին է վկայում 24.03.2023թ.-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ հետևյալ բովանդակությամբ որոշումը /մեջբերման սկիզբը/. «**Հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման ներկայացված հայտերի ուսումնասիրության համար հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մարտի 29-ին՝ ժամը 12:00-ին (...)» /մեջբերման ավարտը/:** Նման պայմաններում ակնհայտ է դառնում, որ 24.03.2023թ.-ին կայացած նիստում շտկման ներկայացված հայտերը չեն ուսումնասիրվել, ինչը նշանակում է, որ «հրավերով սահմանված կարգով» ձևակերպումը վերաբերում է բացառապես փաստաթղթերի **ներկայացման կարգին**, իսկ «հրավերով սահմանված ժամկետում» ձևակերպումը վերաբերում է բացառապես շտկման ներկայացված հայտերի ներկայացման **ժամկետին:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Գնումների հետ կապված վեճով ապացուցման պարտականությունը բաշխելու կանոնները» վերատառությամբ 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ*

իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:*

Ամփոփելով՝ Դատարանը գտնում է, որ Դեպարտամենտը պահպանել է վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը, ինչպես նաև ապացուցել է դրանց հիմքում ընկած հանգամանքները:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր չէ, այն չի բխում ո՛չ օրենքից, ո՛չ գործի նյութերից, հետևաբար՝ այն ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերը.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ *դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով սահմանված պետական տուրքը Հայցվորի կողմից վճարվել է նախապես, ինչպես նաև այն, որ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1/. «ԱՄԵՆԱՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի՝ թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 30.03.2023 թվականի թիվ 8 արձանագրությամբ «ԱՄԵՆԱՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու և այն վերացնելու պահանջների մասին, մերժել:

2/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան